Տեղեկանք-Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև Հայաստանում արևմտյան և չինական բժշկության մեջ օգտագործվող տեխնոլոգիաների ինտեգրված կիրառման ուսումնաբժշկական, գիտահետազոտական տարածաշրջանային կենտրոն ստեղծելու մասին» համաձայնագիրը ստորագրելու նպատակահարմարության վերաբերյալ

Ներկայումս ամբողջ աշխարհում աճում է հետաքրքրությունը չինական բժշկության նկատմամբ՝ հաշվի առնելով կողմնակի ազդեցությունների բացակայությունը: Հայաստանում և տարածաշրջանում չինական բժշկության կիրառման գործընթացը կրում է տարերային բնույթ: Այն հիմնականում գտնվում է սիրողական մակարդակի վրա, որն էլ զգալիորեն նվազեցնում է բուժման արդյունավետությունը: Սա էականորեն ազդում է հասարակական կարծիքի վրա և թերահավատորեն, երբեմն նույնիսկ բացասաբար է ընդունվում արևմտյան բժշկության բժիշկների կողմից:

Ծրագրի կարևորագույն նշանակությունը կայանում է նրանում, որ նախատեսվող կենտրոնը, տարածաշրջանում լինելով միակը, իր մատուցած ծառայությունների որակով չի զիջի համանման չինական կենտրոններին:

Արդյունքում, կենտրոնի գործունեության իրականացման երկու՝ բուժական և ուսումնական ուղղություններն էլ կգործեն՝ բավարարելով Հայաստանի և հարակից երկրների պահանջարկը:

Ուսումնաբժշկական, գիտահետազոտական տարածաշրջանային կենտրոն ստեղծելու նպատակներն են.

1. գիտականորեն հիմնավորել ու գործնականում կիրառել արևմտյան և չինական բժշկության մեջ օգտագործվող տեխնոլոգիաների ինտեգրված կիրառման հնարավորությունը, արդյունավետությունը և անհրաժեշտությունը,

2. կրթել և վերապատրաստել բժշկական կադրեր չինական բժշկության մեթոդաբանության և տեխնոլոգիաների տիրապետման ու կիրառման նպատակով՝ ստացած որակավորման արդյունքները հաստատելով համապատասխան հավաստագրով,

3. ուսումնական և բուժական նպատակներով կիրառել չինական բժշկության բարձր մասնագիտական որակավորում ունեցող բժիշկների ու դասավանդողների հմտությունները, այդ թվում նաև գործնականորեն ապահովել Չինաստանից հրավիրված մասնագետների կողմից հիվանդների բուժում, վերականգնում: